7759

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

# ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՅԵՎ ԲԱԳԿՈՄԻ ՄԻԱՑՅԱԼ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

29–31 հունվարի, 1936 թ.

3КП2(47.924)
Ա-21

ԱԴՐԿՈՒՍՀՐԱՏ — ԲԱԳՈՒ — 1936

17.09.2013

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

24 SEP 2006
14 NOV 2009

# ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՅԵՎ ԲԱԳԿՈՄԻ ՄԻԱՑԻԱԼ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

29–31 ՀՈՒՎԱՐԻ, 1936 Թ.

1. Կուսփաստաթղթերի ստուգման հանրագումարների մասին ԱԿ(բ)Կ–ում.
Ընկ. Ակոփովի զեկուցման բանաձևը, ընդունված 31 հունվարի, 1936 թ.

2. 1935 թ. գյուղատնտեսական աշխատանքների հանրագումարների և 1936 թ. գարնանային գյուղատնտեսական խնդիրների մասին
Ընկ. Վեզիրովի զեկուցման բանաձևը, ընդունված 31 հունվարի 1936 թ.

7759

# ԿՈՒՍՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ Ա Կ (Բ) Կ-ՈՒՄ

## ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՅԵՎ ԲԱԴԿՈՄԻ ՄԻԱՑՅԱԼ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԸ

1936 թ. 31 հունվարի

*Կուսփաստաթղթերի ստուգումը, վոր անց կացվեց կուսակցության առաջնորդ ընկեր* Ստալինի *նախաձեռնությամբ և Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշմամբ, ցույց տվեց, վոր Ադրբեջանի կուսակցական կազմակերպությունն առողջ և մարտունակ կազմակերպություն ե, համախմբված Համկոմկուսի (բ) Կենտկոմի և կուսակցության առաջնորդ մեծ* Ստալինի *շուրջը: Ստուգման հետևանքով իր շարքերը մաքրելով տրոցկիստներից, զինովևականներից, սպիտակ գվարդիականներից, կուլակներից, ավանտյուրիստներից և այլ դասակարգայնորեն թշնամի ու խորթ տարրերից, Ադրբեջանի կուսակցական կազմակերպությունն ամրացրել ե իր շարքերի մարտունակությունը, գաղափարականապես և քաղաքականապես կոփվել ե, բարձրացրել ե կոմունիստների զգաստությունը և բարձրացրել ե կազմակերպչա-մասսայական և քաղդաստիարակչական աշխատանքի մակարդակը:*

*Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բադկոմի միացյալ պլենումը նշում ե, վոր Համկոմկուսի (բ) Կենտկոմի* 1935 *թվի մայիսի* 13*-ի ցուցմունքների ժամանակին ու ճիշտ լինելը, «կուսակցական տնտեսության» բարձիթող վիճակի մասին ամբողջությամբ ու լրիվին*

հաստատվեցին Ադրկոմկուսում (բ) կատարված կուսփաստաթղթերի ստուգմամբ:

Կուսփաստաթղթերի ստուգման ժամանակ Ադրկոմկուսի (բ) բոլոր կազմակերպություններում բազմաթիվ փաստեր են բացվել, վորոնք վկայում են «կուսակցական տնտեսության» քաոսի ու բարձիթող դրության մասին, դեպի կուսփաստաթղթերի հանձնմանն ու պահպանմանը կուսկազմակերպությունների անպատասխանատու վերաբերմունքի մասին (առանձնապես խայտառակ փաստեր են հայտնաբերվել՝ Գյոգչայի, Ջանգելանի, Ղոնաղքենդի, Կալա-Մաշտաղայի, Բումայիլլի, Ջուլֆայի, Ջեբրայիլի, Աղջաբեդու, Մասալլի, Կուբաթլիի և Ձերժինսկու (Բագու) կազմակերպություններում):

Ստուգմամբ հայտնաբերվել և կոմունիստների հաշվառման դրվածքի ծայրահեղ բարձիթող դրությունը, հաստատվել է հաշվառման մեջ յեղած կոմունիստների թվի զգալիորեն տարբերվելը կուսակցական կազմակերպության փաստական կազմից (ամբողջ Ադրկոմկուսում (բ) առ 1-ը հուլիսի 1035 թ. յեղել է 54·928 հոգի, իսկ փաստորեն կուսստուգման ժամանակ դուրս է յեկել 57·903 հոգի):

Կուսփաստաթղթերի հանձնման և պահպանման հաշվառումով, վորպես կանոն, կուսակցության շրջկոմների քարտուղարները չեն զբաղվել: Շրջկոմների հաշվառման աշխատողների կազմը խիստ աղտոտված է յեղել:

Մի շարք շրջկոմներում (Բելոկանի, Սալյանի, րել են դասակարգայնորեն-խորթ տարրերը, ժուլիկներըն ու աֆերիստները, վորի հետևանքով մի շարք շրջկոմներում կուսփաստաթղթեր տալը կատարվել է առանց վորևէ ստորագրության և առանց շրջկոմի բյուրոյի և սկզբնական կազմակերպությունների վորոշման, տեխնիկական աշխատողների ստորագրությամբ, լայն կերպով գործադրվել է այսպես կոչված՝



ժամանակավոր վկայականներ տալը՝ առանց կուսպատկանելիության մանրազնին ստուգման և այլն:

Ադրկոմկուսում (բ) կատարված կուսփաստաթղթերի ստուգման փորձը լիովին հաստատում է Համկոմկուսի (բ) Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի ցուցմունքն այն մասին, «վոր կուսակցության անդամները և կուսկազմակերպությունները դեռևս վատ են յուրացրել Համկոմկուսի (բ) Կենտկոմի բազմիցս ցուցմունքները՝ բոլշևիկյան զգաստությունն ու կարգապահությունը կուսակցության անդամների մեջ ամեն կերպ բարձրացնելու անհրաժեշտության մասին»:

Կուսփաստաթղթերի ստուգմամբ հայտնաբերվել են ուրիշ կուսակցություններից դուրս յեկածներին, տարահպատակներին Ադրկոմկուսի (բ) մեջ ընդունելու ժամանակ կուսակցության կանոնադրության կոպիտ խախտման փաստեր, նույնպես և խմբովին ու բացակայությամբ կուսակցության մեջ ընդունման փաստեր՝ առանց քննարկելու սկզբնական կուսկազմակերպություններում, ընդունող հանձնաժողովներում և շրջկոմների բյուրոներում, կուսակցության մեջ ընդունելը «հարազատի» միջոցով ձևակերպման փաստեր, կուստոմսերի հանձնում «բաժանում» և այլն:

Բոլշևիկյան զգաստության բացակայության և «կուսակցական տնտեսության» վատ դրվածքի հետևանքով մի շարք շրջկոմներում ընդհուպ մինչև ստուգումը շարունակում էին մնալ հաշվառման մեջ կուսակցությունից վտարված անձինք, վորոնցից կուսփաստաթղթերը չէին վերցրել: Բելոկանի, Ղոնաղքենդի, Լենքորանի, Զաքաթալայի և մանավանդ Գյոգչայի շրջաններում կուսակցությունից վտարվածները վոչ միայն մնում էին հաշվառման մեջ, այլ նրանցից մի քանիսը խորհրդային, տնտեսական ու կոոպերատիվ կազմակերպություններում և նույնիսկ կուսակցության այդ շրջկոմների ապարատում մնում էին ղեկավար աշխատանքում:

Կուսփաստաթղթերի ստուգումը մի շարք կուսկազմակերպություններում հայտնաբերեց հակահեղափոխական տրոցկիստ – զինովևական տարրերի, վորոնք հակախորհրդային ակտիվ աշխատանք եյին տանում և մերկացվեցին ու դուրս նետվեցին կուսակցությունից միայն ստուգման ժամանակ:

Անդրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բագկոմի միացյալ պլենումը վորոշում է.

1. Հավանություն տալ և հաստատել Անդրկոմկուսի (բ) Կենտկոմի ու Բագկոմի բյուրոյի՝ կուսփաստաթղթերի ստուգման և «կուսակցական տնտեսության» կարգավորման նկատմամբ Ադրբեջանի կուսակցական կազմակերպության մեջ անցկացրած միջոցառումներին:

Հանձնարարել Անդրկոմկուսի (բ) Կենտկոմին ու Բագկոմին՝ մոտակա օրերին ավարտել հարգելի պատճառներով կուսակցական ստուգումը չանցած և շրջ–կոմների, Կենտկոմի ու Բագկոմի վորոշումներով լրացուցիչ ստուգման համար թողնված կոմունիստների կուսփաստաթղթերի ստուգման լրացուցիչ ակտերի հաստատումը, նույնպես և ուղղել Համկոմկուսի (բ) Կենտկոմի ղեկավար կուսօրգանների բաժնի յեզրակացությունների մեջ նշված անճշտությունները ու տարբերությունները:

2. Յելնելով Համկոմկուսի (բ) Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի այն ցուցմունքներից, վոր «Կուսփաստաթղթերի ստուգման դրական արդյունքների ամրացման մոտակա միջոցառումները, մանավանդ կուսակցության անդամների հաշվառման հետագա կարգավորման նկատմամբ, հանդիսանում է կուսակցական փաստաթղթերի, թեկնածուական քարտերի և կուսակցության անդամների ու թեկնածուների հաշվառման փաստաթղթերի փոխանակումը», Անդրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բագկոմի պլենումը կուսակցական կազմակերպությունների մոտակա շրջանի հիմնա-



կան խնդիրը համարում է այդ կարևորագույն կազմակերպչական քաղաքական միջոցառման խնամքով նախապատրաստումն և օրինակելի կատարումը:

3. Պլենումը պարտավորեցնում է յերկաթուղու 3-րդ և 4-րդ բաժանմունքների և ջրային տրանսպորտի քաղբաժիններին՝ խնամքով կատարել կուսփաստաթղթերի փոխանակման ամբողջ նախապատրաստական աշխատանքը: Միաժամանակ պլենումը պարտավորեցնում է տերիտորիալ շրջկոմներին՝ իրենց հերթին անցկացնել բոլոր անհրաժեշտ միջոցները, վորոնք ապահովում են կուստոմսերի փոխանակման հաջող կատարումը տրանսպորտային կազմակերպություններում:

4. Միացյալ պլենումը պարտավորեցնում է բոլոր կուսկազմակերպություններին՝ ժամանակին պատրաստվել կուսակցության մեջ ընդունելությունը վերսկսելու համար, անշեղ ղեկավարություն ընդունելով Համկոմկուսի (բ) Կենտկոմի պլենումի այն ցուցմունքը, վոր «կուսակցության անդամի, ինչպես և թեկնածուի ընդունելությունը կարող է կատարվել միայն խիստ անհատական կարգով» և վոր «Կուսակցական կազմակերպությունները պետք է ներգրավեն կուսակցության մեջ ինչպես առաջավոր, ինչպես բանվոր դասակարգի գործին նվիրված, մեր յերկրի լավագույն մարդկանց»:

5. Պլենումը պարտավորեցնում է բոլոր կուսկազմակերպություններին՝ վճռականապես բարելավել աշխատանքը համակրողների հետ, վորոնք կուսակցության շարքերի լրացման կարևորագույն ռեզերվ են հանդիսանում: Համակրողների խմբակների մեջ ներգրավելով ամենահավատարիմ, կուսակցությանը մոտիկ կանգնած մարդկանց, ստախանովական – բանվորներին ու կոլտնտեսականներին և աշխատավոր ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչներին, կուսակցական կազմակերպությունները գործնական

աշխատանքում նրանցից պետք ե պատրաստեն մեր կուսակցության արժանի անդամներ:

6. Ամեն կերպ ամրացնելով կուսփաստաթղթերի ստուգման հետևանքով ձեռք բերված կուսակցական աշխատանքի աշխուժացումը, կուսակցական կազմակերպությունները պետք ե ե՛լ ավելի ուժեղացնեն կազմակերպչական — մասսայական և քաղ-դաստիարակչական աշխատանքը, առանձին ուշադրություն դարձնելով կուսակցության յուրաքանչյուր անդամի գաղափարա-քաղաքական դաստիարակությանը, նրա կուլտուրական մակարդակի և առաջատար դերին արտադրության մեջ բարձրացնելու վրա:

7. Նշելով, վոր կուսփաստաթղթերի ստուգման ընթացքում կուսկազմակերպությունները հայտնաբերել են կուսակցական ռեզերվի զգալի կադրեր, պլենումն առաջարկում ե կուսկազմակերպություններին՝ սիստեմատիկ աշխատանք կազմակերպել կուսակցական ռեզերվի հետ: Անհրաժեշտ ե զգայուն կերպով և ուշադրությամբ, վորի մասին մեզ սովորեցնում ե կուսակցության առաջնորդ ընկեր Ստալինը, աճեցնել կուսակցական աշխատողներին, պատրաստված և ստուգված կուսանդամներին կուսակցական ռեզերվից առաջ քաշելով ղեկավար կուսակցական, կոմյերիտական, խորհրդային և տնտեսական աշխատանքի:

8. Համաձայնություն տալ 1936 թվի ընթացքում Բուդյոնու կուսդասընթացներում Ադրկոմկուսի (բ) գյուղական շրջկոմների ամբողջ պրոպագանդիստական և հրահանգչական կազմի և կուսռեզերվից 200 կոմունիստների Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի բյուրոյի նշած վերապատրաստմանը:

9. Նշելով, վոր մի շարք շրջկոմների և քաղկոմների բյուրոների աշխատանքի պրակտիկայում կազմակերպչա — կուսակցական և մասսայական դաստիարակչական աշխատանքի հարցերը համապատասխան տեղ չեն գրավում և վոր դեռևս նկատվում են բյուրո-



յի նիստերում մինչև 40–50 հարցերի քննարկման անթույլատրելի փաստերը, պլենումն առաջարկում ե կուսկազմակերպություններին՝ արմատապես բարելավել քաղկոմների ու շրջկոմների բյուրոների աշխատանքի վորակը, վերջ տալով կուսակցական աշխատանքի հարցերի ձևական մոտեցման ամեն տեսակ տարրերի:

10. Պլենումն առաջարկում ե փոքրաթիվ կուսկազմակերպությունների կազմ ունեցող շրջկոմներին՝ գործադրել համաշրջանային կուս. ժողովների հրավիրումը (ամիսը մի անգամից վոչ ուշ), այդ ժողովներում ապահովելով կուսակցության ու կառավարության կարևորագույն վորոշումների քննարկումը, կապելով նրանց տվյալ կուսկազմակերպության կոնկրետ խնդիրների հետ:

11. Նշելով, վոր միայնակ կոմունիստների հետ տարվող աշխատանքը կուսակցական աշխատանքի չափազանց թույլ տեղամասն ե հանդիսանում՝ պլենումն առաջարկում ե կուսկազմակերպություններին ամիսը մի անգամից վոչ ուշ շրջկոմներին կից հրավիրել միայնակ կոմունիստների ժողովներ, դնելով այդ ժողովներում ներկուսակցական կյանքի հարցերը: Անհրաժեշտ ե միայնակ կոմունիստներին ամրացնել կուս. լուսավորության համապատասխան խմբակների, վորոնք տերիտորիալ ձևով մոտիկ են, տալ նրանց առանձին կուսակցական հանձնարարություններ և ստուգել նրանց կատարումը:

12. Պլենումը պարտավորեցնում ե բոլոր կուսկազմակերպություններին՝ բարելավել մարքս-լենինյան ուսման գործի ղեկավարությունը, ձեռք բերելով կուսակցական պրոպագանդի բարձր վորակ, առանձին ուշադրություն դարձնելով կուսակցության կանոնադրության ու պատմության և ընկեր Բերիայի՝ «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի առթիվ» զեկուցման խոր ու-

ուսումնասիրության վրա: Առանձին ուշադրություն պետք է դարձնել պրոպագանդիստների կազմի ստուգմանն ու ընտրությանը, նրանց հետ տարվող սիստեմատիկ աշխատանքի, կուսակցական կաբինետների աշխատանքի վճռական բարելավմանը:

Պլենումը պարտավորեցնում է կուսակցության բոլոր շրջկոմներին՝ բարելավել շրջանային թերթերի, բազմատիրաժների և պատի թերթերի աշխատանքի վիճակը և նրանց ապահովել սիստեմատիկ հրահանգում ու օգնություն:

Նշելով անգրագետ և կիսագրագետ կոմունիստների մեծ տոկոսն Ադրկոմկուսի (բ) մեջ, մանավանդ գյուղական կազմակերպություններում, պլենումն առաջարկում է բոլոր շրջկոմներին՝ անցկացնել միջոցառումներ, վորոնք ապահովեն կոմունիստների այբբենական անգրագիտության ու կիսագրագիտության վերացումը մինչև 1936 թվի հունիսի մեկը:

13. Ելնելով Համկոմկուսի (բ) Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի — «Տեխնիկական մինիմումի ուսուցումը բոլոր բանվորների և բանվորուհիների համար դարձնել ընդհանուր և պարտադիր» — ցուցմունքից, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ու Բաքկոմի պլենումն առաջարկում է բոլոր կուսկազմակերպություններին՝ ուշադրության կենտրոնում դնել յուրաքանչյուր բանվորի տեխ-մինիմումի ուսուցման խնդիրը և ձեռք բերել կոմունիստների առաջատար դերը «բանվոր դասակարգի կուլտուր — տեխնիկական մակարդակն ինժեներա—տեխնիկական աշխատանքի աշխատողների մակարդակին հասցնելու» գործում:

14. Հանձնարարել Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ղեկավար կուսմարմինների բաժնին՝ տասնօրյա ժամկետում սահմանել Ադրկոմկուսի (բ) ստորին կուսկազմակերպությունների կողմից սիստեմատիկորեն շրջկոմներին քաղ. ինֆորմացիա տալու կարգը, պարտավորեցնելով վերջիններիս ամիսը մի անգամից ոչ ուշ քաղ.



ինֆորմտեղեկագրեր ներկայացնելու Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին ու Բաքկոմին: Պարտավորեցնել Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ղեկավար կուսմարմինների բաժնին՝ յերեք ամիսը մի անգամից ոչ ուշ կուսակցության շրջկոմներին ուղարկել ընդհանրացրած քաղ. ինֆորմացիա շրջանային կուսկազմակերպությունների կուս. քաղաքական աշխատանքի դրության մասին:

15. Պլենումն առաջարկում է բոլոր կուսկազմակերպություններին՝ բոլշևիկորեն կազմակերպել կուսակցական վորոշումների կատարման ստուգման գործը, առանձին ուշադրություն դարձնելով վերադաս մարմինների վորոշումների ստորին կուսկազմակերպությունների կողմից կատարվելու ստուգմանը:

16. Պլենումը պարտավորեցնում է կուսկազմակերպություններին՝ դադարեցնել շրջկոմի հրահանգիչներին, վորպես «կլիպորների» զանազան կամպանիաներում օգտագործելու պրակտիկան: Ղեկավարության բարելավման և հրահանգիչներին օգնելու նպատակով ամիսը 2 անգամից ոչ պակաս հրահանգիչների խորհրդակցություններ հրավիրել շրջանում տարվող կուսաշխատանքի հարցերով, սիստեմատիկ աշխատանք տանելով հրահանգիչների գաղափարա—քաղաքական մակարդակի բարձրացման և նրանց մասհորիզոնի լայնացման նպատակով:

17. Պլենումն առաջարկում է Ադրկոմկուսի բոլոր շրջկոմներին՝ հասնել դիֆերենցիալ ղեկավարության համապատասխան յուրաքանչյուր սկզբնական կուսկազմակերպության առանձնահատկությունների, նկատի ունենալով, վոր այդպիսի դիֆերենցացումը սկզբնական կազմակերպությունների կոնկրետ օպերատիվ ղեկավարության և կոմունիստների մասսաների հետ կուսմարմինների անմիջական ու կենդանի կապի հաստատման անհրաժեշտ պայմանն է հանդիսանում:

18. Պլենումը պարտավորեցնում է բոլոր կուսակցական կազմակերպություններին՝ ապահովել կուսաշ

ղեկավարության վճռական բարելավումը կոմյերիտական կազմակերպությունների նկատմամբ, յերիտասարդության գաղափարա-քաղաքական դաստիարակությունը Լենինի-Ստալինի կուսակցության մարտական տրադիցիաների վոգով ու կուսակցության պատրաստված, ստուգված անդամներին կոմյերիտական աշխատանքի առաջքաշումը:

19. Նշելով, վոր ստախանովյան շարժումը դեռևս բավարար չափով չի զարգացել Ադրբեջանի ձեռնարկություններում և կոլտնտեսություններում, պլենումը պարտավորեցնում է բոլոր կուսկազմակերպություններին, մանավանդ նավթային շրջանների կուսկազմակերպություններին, ստախանովականների համամիութենական խորհրդակցությունում ընկեր Ստալինի տված ցուցմունքների և Համկոմկուսի (բ) Կենտկոմ դեկտեմբերյան պլենումի վորոշումների իրացման հիման վրա ձեռք բերել այն, վոր ստախանովյան շարժումը դառնա բանվորների ու կոլտնտեսականների իսկական մասսայական շարժում, բարձրացնել կոմունիստների առաջատար դերն այդ շարժման մեջ, մերկացնել և բնումը խեղդել աշխատանքի ստախանովյան մեթոդների սաբոտաժի ամեն մի փորձ, վճռականապես բարելավել բոլոր բանվորների ու ստախանովականների, մանավանդ կոմունիստների տեխնիկական ուսման գործը:

---

Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բաքկոմի պլենումը հավաստիացնում է Համկոմկուսի (բ) Կենտկոմին և սիրելի առաջնորդ ընկեր Ստալինին, վոր Ադրբեջանի կոմունիստները, անսահման հավատարիմ Լենինի-Ստալինի գործին, հաշվի առնելով կուսակցական փաստաթղթերի ստուգումից բխող բոլոր դասերը, որինակելի ձևով կկատարեն կուսակցական տոմսերի փոխանակումը:

Անդադար բարձրացնելով դասակարգային զգաստությունը, ուժեղացնելով կոմունիստների առաջատար դերն արտադրության մեջ, իրենց շարքերում ամրացնելով բոլշևիկյան յերկաթե կարգապահությունը, ձեռք բերելով կազմակերպչա-մասսայական և քաղաքական-դաստիարակչական աշխատանքի որինակելի դրվածք ու ստախանովյան շարժման լայն ծավալում, Ադրբեջանի բոլշևիկներն է՛լ ավելի ամուր համախմբելով Համկոմկուսի (բ) Կենտկոմի և մեծ Ստալինի շուրջը, Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի ու ընկեր Բերիայի անմիջական ղեկավարությամբ Ադրբեջանի աշխատավորներին է՛լ ավելի վստահորեն առաջ կտանեն Լենինի-Ստալինի դրոշի տակ:

## 1936 ԹՎԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՑԵՎ 1936 ԹՎԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ

### ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՑԵՎ ԲԱԳԿՈՄԻ ՄԻԱՑՅԱԼ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԸ

1936 թ. 31 հունվարի

*Համկոմկուսի (բ) Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի վորոշումները և արդյունաբերության ու տրանսպորտի ստախանովականների համամիութենական խորհրդակցության ու գյուղական տնտեսության անվանի մարդկանց խորհրդակցության հանրագումարները վկայում են այն խոշորագույն հաղթանակների մասին, վոր տարվել են ԽՍՀՄ ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ 1935 թվին:*

*Այդ հաղթանակները յերկիրը տարել է Համկոմկուսի (բ) Կենտկոմի ու մեծ Ստալինի ղեկավարությամբ, կուսակցության գլխավոր գծի հաստատուն և անշեղ իրագործման ու ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում ստախանովյան շարժման լայն ծավալման հետևանքով:*

*Խորհրդային Ադրբեջանը՝ լենինյան — ստալինյան ազգային քաղաքականության ու կուսակցության առաջնորդ ընկեր Ստալինի անմիջական ցուցմունքների անշեղ իրագործման հիման վրա, Համկոմկուսի (բ) Կենտկոմի և Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի ղեկավարությամբ 1935 թ. նշանակալի աջողություններ է ձեռք բերել գյուղական տնտեսության վերելքի ասպարեզում:*



*Աջողությամբ կատարված է անասնապահության զարգացման 1935 թվի պետական պլանը:*

*Ժամկետից առաջ կատարվել են՝ հացամթերումները՝ 103,2 տոկոսով, չալթուկի մթերումը 103,6 տոկոսով, կարտոֆիլի մթերումը՝ 103,7 տոկոսով, ծխախոտի մթերումները 103,9 տոկոսով և այլն:*

*Նշանակալից կերպով բարելավվել են կոլտնտեսային մասսաների նյութական — կենցաղային պայմանները և բարձրացել է կուլտուրական ու քաղաքական մակարդակը: Աճել են հարյուրավոր նոր մարդիկ՝ գյուղական տնտեսության լավագույն կազմակերպիչներ ու վարպետներ, վորոնք տիրապետել են նոր տեխնիկային:*

*Գյուղատնտեսական արտելի ստալինյան կանոնադրությունը դարձել է հիմնական պայման կոլտնտեսությունների կազմակերպչական — տնտեսական հետագա ամրապնդման գործում: Կոլտնտեսությունները զգալիորեն բարձրացրել են իրենց յեկամտայնությունը: 1935 թվին կոլտնտեսություններն են մտել 56.386 նոր տնտեսություններ:*

*Դրա հետ միասին Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բագկոմի պլենումը մատնանշում է, վոր Հողժողկոմատի վատ աշխատանքի, Սալյանի, Բարդայի, Ալի-Բայրամլուի, Աղդաշի, Աղջաբեդու, Ղազախի, Թարթառի, Աղդամի, Բեյլասուվարի, Կարյագինի, Ցեվլախի, Ջրաբերդի ու Սամուխի շրջանների և Միլի № 3 ու № 5 խորհտնտեսությունների կուսակցական-խորհրդային կազմակերպությունների վատ աշխատանքի հետևանքով բամբակի հավաքման ու հանձնման 1935 թվի պետական պլանը չի կատարվել և հանրապետությունը յերկրին պակաս է տվել 20 հազար տոնն բամբակ:*

*Մինչդեռ, բոլոր այս կազմակերպությունները*

մինչև այժմ պատշաճ յեզրակացություններ չեն հանել 1935 թվի բամբակային և հացահատիկային կամպանիաների դասերից ու շարունակում են 1936 թվի գարնան նախապատրաստությունը տանել միանգամայն անբավարար:

Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բաքկոմի միացյալ պլենումը գտնում է, որ հանրապետության կուսակցական, խորհրդային կազմակերպությունների և հողային օրգանների հիմնական խնդիրները 1936 թվին հանդիսանում են.

ա) ստախանովյան շարժման լայն ծավալումը գյուղական տնտեսության բոլոր ասպարեզներում, բամբակի բերքատվության բարձրացումը, սահմանված 193.500 տոնն պլանի անպայման կատարումը, 20 հազար տոնն պարտքի ծածկումը, բարձր բերքատվության առանձին հեկտարներից՝ բարձր բերքատվության օղակներին, բրիգադներին, կոլտնտեսություններին և ամբողջ շրջաններին անցնելը.

բ) հացահատիկային կուլտուրաների գծով աշխատանքի արմատական վերակառուցումը, բարձր ագրոտեխնիկայի և բերքատվության ընկեր Ստալինի «մոտիկ ապագայում, 3–4 տարուց հետո հացի յուրաքանչյուր տարվա արտադրությունը հասցնել մինչև 7–8 միլիարդ փթի» — ցուցմունքի կատարումն ապահովող չափերով բարձրացնելու բազայի վրա.

գ) անասունների ցեղի բարելավումը և նրանց կաթնատվության բարձրացումը:

Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բաքկոմի միացյալ պլենումը վորոշում է:

1. Հավանություն տալ 1936 թվի գարնանային գյուղատնտեսական կամպանիայի նախապատրաստության մասին Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի բյուրոյի ընդունած միջոցառումներին:

1936 թվի գարնան համար կոլտնտեսային-գյուղացիական սեկտորի գծով գարնանային ցանքսերի պլա-



նը հաստատել 439 հազար 700 հեկտար, վորից 193 հազար 500 հեկտար բամբակ, այդ թվում խորհտնտեսություններում՝ 9 հազար հեկտար:

Բամբակի համար բերքատվություն սահմանել՝ ամերիկյանի համար—11 ցենտներ, յեգիպտականի համար—7.2 ցենտներ մի հեկտարից:

2. Պարտավորեցնել Հողժողկոմատին և շրջանային կուսակցական ու խորհրդային կազմակերպություններին՝ գարնանացանի և բերքատվության պլանն անհապաղ հասցնել առանձին կոլտնտեսություններին և մենատնտեսություններին, կազմակերպելով պլանի լայն քննարկումը կուսակցական ժողովներում, ՄՏԿ-ների ու խորհտնտեսությունների բանվորների, մասնագետների, կոլտնտեսականների և մենատնտես աշխատավորների արտադրական խորհրդակցություններում, ապահովելով անհրաժեշտ միջոցառումների կիրառումն այն կատարելու ուղղությամբ:

Առանձին կոլտնտեսությունների և գյուղխորհուրդների գծով ցանքի պլանի վերջնական ճշտումն ավարտել մինչև փետրվարի 15-ը: Մինչև այդ ժամկետն ավարտել պլանից դուրս կուլակային տնտեսություններին հաստատուն պարտավորություններ տալը:

3. 1936 թ. համար 193500 տոնն հնդավոր բամբակի պլանը և 1935 թ. 20.000 տոնն պարտքը ծածկելու խնդիրը կարող են կատարվել միայն բոլոր կուսակցական կազմակերպությունների, կոլտնտեսականների ու մենատնտես աշխատավորների, ՄՏԿ-ների և խորհտնտեսությունների բանվորների ու մասնագետների ամբողջ մասսայի իսկական մոբիլիզացիայի պայմաններում, մոբիլիզացիա՝ բարձր բերքատվության պայքարի համար՝ ստախանովյան շարժման հզոր ծավալման հիման վրա:

Պարտավորեցնել Հողժողկոմատին, շրջանային կուսակցական և խորհրդային կազ-

1002
39370
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվան

մակերպություններին՝ բոլոր կոլտնտեսությունների աշխատանքի պրակտիկայում լայնորեն արմատացնել բամբակի բարձր բերքատվության վարպետների փորձը, կազմել կոնկրետ միջոցառումներ բամբակի համար յուրաքանչյուր օղակի, բրիգադի և ամբողջ կոլտնտեսության գծով, այս բանում բարձր բերքատվության վարպետների և իրենց կոլտնտեսականների պարտադիր մասնակցությունը գրավելով: Սրան համապատասխան աճեցնել օղակների, բրիգադների և ամբողջ առանձին կոլտնտեսությունների անցումը բարձր բերքատվության, լայնորեն ծավալել ամենուրեք բամբակի գծով «երեսունականների» և յեգիպտականի գծով «քսանականների» ստալինյան արշավին:

Ադրբեջանի (բ) Կենտկոմի և Ժողկոմխի միացյալ պլենումը գտնում է, վոր Զանգեզուրի, Կիրովաբադի, Կասում-Իսմայլովի, Կարյագինի, Թաուզի և Շամխորի շրջանները բոլոր հնարավորություններն ունեն 1936 թվին դառնալու բարձր բերքատվության շրջաններ և նրանց առաջ խնդիր է դնում աճեցնել միջին հաշվով ըստ շրջանի բերքատվության տասցում—Զանգեզուրի շրջանում՝ 20 ցենտներ, Կիրովաբադի շրջանում՝ 18 ցենտներ, Կասում-Իսմայլովի շրջանում՝ 15 ցենտներ, Կարյագինի՝ 14 ցենտներ. Շամխորի և Թաուզի շրջաններում՝ 13-ական ցենտներ:

Բարձր բերքատվությունն ապահովող միջոցառումների նախապատրաստման և կիրառման գործում շրջկազմակերպություններին օգնելու համար պարտավորեցնել Հողժողկոմատին վոչ ուշ քան փետրվարի 15-ը յերեք ամիս ժամկետով շրջաններն ուղարկել կենտրոնական ապարատի մասնագետների վոչ պակաս քան կեսը, այն հաշվով, վորպեսզի նրանցից մի մասն ամրացվի մշտական աշխատանքի շրջանային օրգաններում:



4. Պարտավորեցնել Ադրբեջանի (բ) շրջկոմներին, շրջգործկոմներին և շրջհողբաժիններին ու ՄՏԿ-ների դիրեկտորներին՝ ամրացնել բերքատվության խորհուրդների աշխատանքը, դրանց կազմի մեջ ներգրավելով բամբակի ստախանովականներին, ցույց տալ նրանց գործուն օգնություն և նրանց աշխատանքում ստեղծել ամենայն պայմաններ, վորպեսզի խորհուրդները գործնականում դառնան բարձր բերքատվության համար կոլտնտեսությունների մղած պայքարի կենտրոններ: Հաստատել, վոր բերքատվության խորհուրդների նախագահները, կոլտնտեսությունների նախագահների և բրիգադիրների հետ հավասար պատասխանատվություն են կրում յուրաքանչյուր տեղամասում ամբողջ ագրոկոմպլեքսը ճիշտ անցկացնելու համար:

Շրջանային կազմակերպություններին և Հողժողկոմատին՝ կազմակերպել բերքատվության խորհուրդների աշխատանքի փորձի լայն փոխանակումը և համադրումը: Փետրվարին հրավիրել խորհուրդների նախագահների և բարձր բերքատվության վարպետների շրջանային ու հանրապետական խորհրդակցություններ:

5. Առաջարկել Հողժողկոմատին՝ մինչև փետրվարի 15-ը մասսայական տիրաժով հրատարակել բարձր բերքատվության այն վարպետների աշխատանքի փորձը, վորոնք իրենց հողամասերում հասել են մի հեկտարից 35 և ավելի ցենտներ բամբակի: Պարտավորեցնել շրջանային հողային օրգաններին և բերքատվության խորհուրդներին՝ քննության առնել այդ փորձը կոլտնտեսությունների օղակներում և բրիգադներում:

6. Մատնանշելով 1935 թվին յեգիպտական բամբակի շատ վաղ ցանքսի դրական արդյունքները, 1936 թվին անցկացնել շատ վաղ ցանքս 15 հազար հեկտարից վոչ պակաս տարածության վրա՝ ըստ շրջանների

հետևյալ տեղաբաշխմամբ—Ալի-Բայրամլիի շրջանում՝ 4.800 հեկտար, Սալյանի շրջանում՝ 4.400, Սաբիր-Աբադի շրջանում՝ 3.700, Բյուրդամիրի շրջանում՝ 600 և խորհտնտեսություններում՝ 1.500 հեկտար:

7. Պարտավորեցնել Հողժողկոմատին, Ադրկոմկուսի (բ) շրջկոմներին, շրջգործկոմներին և շրջհողբաժիններին և ՄՏԿ-ների ու խորհտնտեսությունների դիրեկտորներին՝ ապահովել հետևյալ միջոցառումների կիրառումը:

Ա) Մինչև փետրվարի 15-ը ավարտել ամբողջ հերկի վրա ցանքի ստուգումն այն հաշվով, որպեսզի հերկի բոլոր խոտանված հողամասերը նորից հերկվեն մինչև փետրվարի 20-ը:

Բ) Մարտի 5-ից մինչև ապրիլի 5-ը ժամանակաշրջանում անցկացնել երկրորդ հերկը բոլոր տարածություններում՝ բացի ձմեռային արածի ընթացիկ տարածություններից:

Գ) Երկրորդ հերկի համար հանքային պարարտանյութերի դաշտ դուրս բերելը կազմակերպել այնպիսի հաշվով, որպեսզի ապահովվի այդ աշխատանքի բարձր որակը, առանձին ուշադրություն դարձնելով խառնուրդը ճիշտ կազմելու և այն հողի մեջ մտցնելու վրա: Ապահովել բոլոր տեղական պարարտանյութերի (գոմաղբ, առվի տիղմ, մոխիր և այլն) հողի մեջ մտցնելը, հաստատելով դրանց ճիշտ պահպանումը:

Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բաքկոմի պլենումը պահանջում է շրջանային կազմակերպություններից արմատախիլ անել հանցավոր վերաբերմունքը պարարտանյութերի նկատմամբ և խիստ դատական պատասխանատվության ենթարկել այն անձերին, որոնք անփութորեն են վերաբերվում պարարտանյութերը պահպանելուն և հողի մեջ մտցնելուն:

Դ) Կնգուղակների դեմ պայքարելու նպատակով անցկացնել այն հողերի պարտադիր հերկը, որոնք



հարում են բամբակային մասիվներին 15 մետրից ոչ պակաս տարածությամբ, այդ մասիվների շուրջը չը թողնելով դատարկ տարածություններ և սահմաններ: Անցկացնել բոլոր բենդերում և առուներում մոլախոտերի ուշադիր քաղհանումը և այրումը:

Ե) Բամբակի ցանքը կատարել խտացրած ժամկետներին, ավարտելով այն ամերիկյանը՝ մինչև մայիսի 5-ը, եգիպտականինը՝ մինչև մայիսի 1-ը:

Հատուկ ուշադրություն դարձնել սերմերի ծածկմանը խոնավ հողի մեջ այն հաշվով, որպեսզի անհապաղ ուղղվեն ծածկման թերությունները: Անցկացնել դաշտերի ծայրերի և շարքերի վերջավորությունների ձեռքով կատարվող շտկումը: Ցանքից 6-10 օր հետո անցկացնել ծլերի համատարած ստուգումն այն հաշվով, որպեսզի անհապաղ կատարվի չծածկված խոռոչների վերացանքս ծլերի ոչ մեծ նոսրություն ունեցող տարածություններում և կրկնացանքս ծլերի մեծ նոսրություն ունեցող տարածություններում:

Զ) Առաջարկել Հողժողկոմատին և շրջանային կազմակերպություններին անցկացնել բամբակի համար հերկված ամբողջ տարածության համատարած ռուլետային չափումը:

8. Հավանություն տալով այն միջոցառումներին, որոնք ձեռք են առնված Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի բյուրոյի կողմից բամբակի ցանքային սերմերի նախապատրաստության ուղղությամբ, պարտավորեցնել Ադրկոմկուսի (բ) շրջկոմներին, շրջգործկոմներին և ՄՏԿ-ների ու խորհտնտեսությունների դիրեկտորներին կազմակերպել սերմանյութի պահպանումը, զտումն ու ախտահանումն այնպես, որպեսզի ապահովվի նրանց ծլունակության լիակատար պահպանվածությունը:

9. Հաստատել Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի բյուրոյի կողմից ընդունված բոլոր ոռոգման սիստեմների նախապատրաստության պլանն ու միջոցառումնե-

րը գարնանային վառոգումների համար: Պարտավո-րեցնել Հողժողկոմատին, Ադրջրտնտեսության և շըր-ջանային կազմակերպություններին ավարտել ամբողջ աշխատանքը սահմանված ժամկետներին այն հաշվով, վորպեսզի մարտի սկզբին բոլոր վոռոգող սիստեմնե-րը դրվեն լիակատար պատրաստության մեջ: Նույն այդ ժամկետին լրիվին ավարտել Կուռ և Արաքս գե-տերի պատնեշավորման աշխատանքը:

10. Պարտավորեցնել Ադրկոմկուսի (բ) շրջկոմնե-րի քարտուղարներին, շրջգործկոմների նախագահնե-րին, շրջհողբաժինների վարիչներին և ՄՏԿ-ների ու խորհտնտեսությունների դիրեկտորներին, բամբա-կային ու անասնապահական խորհտնտեսությունների քաղբաժինների պետերին՝ լիակատար պատրաստու-թյան մեջ դնել տրակտորային պարկը մինչև փետր-վարի 20-ը և խորհտնտեսությունների, ՄՏԿ-ների, կոլտնտեսությունների ու մենատնտեսությունների մը-նացած ամբողջ գյուղատնտեսական ինվենտարը մինչև մարտի 1-ը: Կազմել տրակտորային պարկի կոնկրետ մարշրուտներ յուրաքանչյուր բրիգադում այն հաշ-վով, վորպեսզի վերացվեն պարապուրդները և մինի-մումի հասցվեն տրակտորների անտեղի յերթերը, յեվ լավագույն տրակտորիստ-առաջավորականների փոր-ձի լայն արմատացումով ձեռք բերվեն տրակտորների աշխատանքի արտադրողականության խիստ բարձրացում և դրանով իջեցնել ինքնարժեքն ու ապահովել ՄՏԿ-ների ու խորհտնտեսությունների անցումը հասութա-բեր աշխատանքի:

Հանձնարարել ՄՏԿ-ների դիրեկտորներին, մի տասնօրյա ժամկետում ՄՏԿ-ների արտադրական խոր-հուրդներում քննության առնել տրակտորային պարկի աշխատանքի և մարշրուտի պլանը:

11. Պարտավորեցնել Հողժողկոմատին, Ադրկոմ-կուսի (բ) շրջկոմներին և շրջգործկոմներին՝ բոլոր կոլտնտեսություններում կազմակերպել բանող անա-



սունի կերակրով ապահովության ստուգումը, գնե-լով բանող անասունների համար խտացված և կոշտ կերերի յերկու ամսյա անձեռնմխելի պաշարի անպայ-ման ստեղծման պայմանը ցանքային աշխատանքնե-րի շրջանում:

12. Հաստատել այն միջոցառումները, վորոնք ընդունված են Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի բյուրոյի կողմից՝ գարնանային ցանքային կամպանիայի հա-մար մասսայական կվալիֆիկացված կադրեր պատ-րաստելու և վերապատրաստելու ուղղությամբ:

Պարտավորեցնել Հողժողկոմատին և շրջկազմա-կերպություններին փետրվարի և մարտի ընթացքում յուրաքանչյուր շրջանում անցկացնել բոլոր գյուղա-տնտեսների, նախագահների, բրիգադիրների և կոլ-տնտեսությունների ողակավարների, տրակտորային բրիգադների բրիգադիրների և կոլտնտեսային կու-սակցական ու կոմյերիտական կազմակերպիչների հա-տուկ դասընթաց-կոնֆերանսներ այն հաշվով, վոր-պեսզի բարձրացվի նրանց պատրաստությունը 1936 թվի գարնանային ցանքային կամպանիայի խնդիրնե-րի մակարդակին:

13. Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բաքկոմի պլե-նումը գտնում է, վոր 1936 թիվը պետք է շրջադար-ձային տարի դառնա կոլտնտեսականների և կոլտնտե-սուհիների մեջ ագրոտեխնիկական պրոպագանդի լայն արմատացման գործում:

Պարտավորեցնել Հողժողկոմատին, ԱդրԼԿՅԵՄ Կենտկոմին և շրջանային կուսակցական ու խորհրդա-յին կազմակերպություններին ծավալել կոլտնտեսու-թյուններում (առաջին հերթին բամբակային շրջաննե-րում) ագրոտեխմինիմումի մասսայական խմբակների ցանցը, ներգրավելով այդ աշխատանքին բոլոր մաս-նագետներին, գյուղատնտեսներին, զոոտեխնիկներին, ուսուցիչներին, և գյուղական տնտեսության վարպետ-ներ-առաջավորականներին:

խմբակների աշխատանքը դնել այնպես, վորպեսզի մինչև ապրիլի մեկն ավարտվի ագրոտեխքննության հանձնումը բոլոր կոլտնտեսությունների նախագահների, բրիգադիրների, օղակավարների, նույնպես յեվ կոմունիստների ու կոմյերիտականների կողմից:

Հանձնարարել Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի բյուրոյին քննել և հաստատել ագրո-տեխմինիմումի ծրագիրը և վերանայել Հողժողկոմատի կազմած բամբակի վերաբերյալ ագրոկանոնները այն ձևով, վոր նրանք բամբակային դաշտերի բարձր բերքատվության համար մղվող պայքարի իրոք ստալինյան ուղեգծեր դառնան:

14. Հավանություն տալ կոմյերիտմիության բարձր բերքատվության առնվազն 1000 օղակների և 1000 ագրոտեխնիկական խմբակների կազմակերպման վերաբերյալ «յերեսնականների» ստալինյան արշավի մեջ ներառնելու միջոցառումներին: Հանձնարարել ԱԼԿՅԵՄ Կենտկոմին քննարկել և մշակել միջոցառումները՝ կոմյերիտականներին ստախանովյան շարժման մեջ հետագա ներգրավման մասին:

15. Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ու Բաղկոմի պլենումը պարտավորեցնում է կուսակցական, խորհրդային կազմակերպություններին հասնել կոլտնտեսականների, բանվորների և խորհտնտեսությունների մասնագետների մասսաների հետագա մոբիլիզացմանը՝ կատարելու և գերակատարելու անասնաբուծության զարգացման պետական պլանը 1936 թվին՝ առանձին ուշադրություն դարձնելով ազնվացման գործի ուժեղացմանը և անասունների տեղական ցեղերի վորակական բարելավմանը: Միջոցառումներ անցկացնել անասունները մասսայաբար մետիսացնելու վերաբերմամբ, արմատացնել սիլոսային ու կենտրոնացրած կերախոտերն ամեն մի տնտեսության մեջ, ուժեղացնել անասունների համար կուլտուրական շենքերի շինարարությունը և դրանով հասնել կովերի բարձր



կաթնատվության, վոչխարների բրդի խուզվածքի և անասունների կենդանի քաշի զգալի ավելացման: 1936 թվին ապահովել ապրանքային ֆերմաների կազմակերպումն ամեն մի կոլտնտեսությունում:

16. Նշելով կերային բազայի զգալի հետամնացությունն անասունների գլխաքանակի աճման տեմպերից՝ Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բաղկոմի պլենումը պահանջում է Հողժողկոմատից և շրջանային կազմակերպություններից 1936 թվին ապահովել բոլոր խոտհարքային հողերի ժամանակին ու լրիվ հնձումը, ցանած խոտերի ու սիլոսային բույսերի բերքատվության բարձրացումը, մարգագետինների ու արոտատեղիների բարելավումը և ավարտել 1936 թվին ձմեռային ու ամառային արոտատեղիների ինվենտարացումը:

17. Ի. Լ. Ղարաբաղի Հադրութի շրջանն առանձնացնել վորպես անասնապահության բարձր մթերատվության շրջան և սահմանել հետևյալ նորմաները.

ա) ֆերմայում ամեն մի կովից տալ միջին հաշվով 1000 լիտր կաթ.

բ) մեծ վոչխարների բրդի խուզումը հասցնել ամեն մի գլխին միջին հաշվով 2,5 կիլոգրամի.

գ) ամեն մի մերունից տալ միջին հաշվով առնվազը 12 պիտանի խոճկոր.

դ) 100 մաքիներից տալ առնվազը 115 գառը:

18. Վորպես մետաքսագործության բարձր արտադրանքի շրջան առանձնացնել Որդուբադի (Նախ. ՍԽՀ) և Ստեփանակերտի (Ի. Լ. Ղարաբաղ) շրջանները և սահմանել մի տուփին 50 կիլոգրամ բոժոժ:

19. Նշելով հացահատիկային գարնանային բույսերի ցածր բերքատվությունը՝ պլենումը պահանջում է Հողժողկոմատից և շրջանային կազմակերպություններից կարգի բերել գարնանային հացաբույսերի պլանավորումն ըստ ամեն մի շրջանի ու կոլտնտեսության: Ապահովել գարնանային հացահատիկների բեր

քատվության բարձրացումը հողի բարձրորակ մշակումով, պարարտանյութեր մտցնելով, սերմերի համապատասխան ստուգումով, զտումով ու ախտահանումով և ցանքը խտացված ժամկետներում կատարելով, լայնորեն շարքացան կիրառելով: Արմատացնել գարնանացման ցանքերը:

Ամեն մի շրջանի համար կազմել ու հրատարակել գարնանային բույսերի հանրամատչելի ագրոկանոններ և նրանց հիման վրա ապահովել տարբերված ագրոմիջոցառումներն ամեն մի բրիգադում ու տեղամասում և առանձնապես չալթուկի ցանքերում:

20. Ապահովել աշնանացանքերի գարնանային վոռոգման ժամանակին անցկացումը բոլոր ջրովի հողերում և ծիլերի մանրազննին համապատասխան քաղհանումը՝ մոլախոտերը լրիվին վոչնչացնելու նպատակով:

Անց կացնել այնպիսի ծավալուն միջոցառումներ, վորոնք ապահովեն առանձին շրջանների դաշտերում արդեն յերևացած գյուղատնտեսական վնասատուների լրիվին վոչնչացումը:

Մանրազննին հսկողություն կազմակերպել աշնանացանքերի դրության, մասնավորապես անցկացնել փորձով իրեն արդարացրած վոչ ջրովի հողերի աշնանացանի ծիլերի գարնանային ցաքանումը, այլև փչացած ցանքատեղամասերում գարնանացան բույսերի կրկնացանի կատարումը:

21. Պարտավորեցնել Հողժողկոմատին և շրջանային կուսակցական ու խորհրդային կազմակերպություններին ապահովել հացահատիկային տնտեսության հարկ յեղած հոգատարությունն ամբողջ տարվա ընթացքում և վաղ գարնանից սկսել աշնան համար ցել անել՝ այդ աշխատանքին լծելով ցանքից առաջ ամբողջ լծկաններն ու տրակտորները:

Աշնանացանի նոր հողեր յուրացնելու համար անհապաղ ամեն մի կոլտնտեսությունում յեղած պլանի համաձայն, սկսել դաշտերի թփերն ու կոշտ խոտերն արմատահան անել ու դաշտերը մաքրել:



22. Հացահատիկային բույսերի խմբում բարձր բերքատվության շրջաններ առանձնացնել Շամախու շրջանը, վորտեղ աշնանացան ցորենի բերքատվություն սահմանել հեկտարին 15 ցենտներ, Կուրաթյուրի շրջանը, վորտեղ չալթուկի բերքատվություն սահմանել հեկտարին 35 ցենտներ, Լենքորանի ու Աստարայի շրջանները՝ հեկտարին 30-ական ցենտներով:

Պտուղների վերաբերմամբ առանձնացնել Ղուբայի շրջանը, վորտեղ սերմնավոր պտուղների բերքատվությունը սահմանել հեկտարին 5.5 տոնն, խաղողի վերաբերմամբ—Նարիմանովի շրջանը — հեկտարին 14.5 տոնն, կարտոֆիլի՝ Գետաբեկի շրջանը — հեկտարին 10 տոնն, բանջարեղենի՝ Խաչմասի շրջանը—հեկտարին ամեն տեսակ բանջարեղենի 12 տոնն:

Ծխախոտի վերաբերմամբ բարձր բերքատվության շրջան առանձնացնել Զաքաթալայի շրջանը, վորտեղ միջին հաշվով սահմանել հեկտարին 12 ցենտներ բերք:

23. Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ու Բաքկոմի պլենումը գտնում է, վոր հանրապետության մեջ մերձարևադարձային մշակույթների հետագա զարգացումը պետք է ընթանա թեյը Մասալլի, Զաքաթալայի և Բելոկանի նոր շրջաններում արմատացնելու գծով, ցիտրուսայիններն Աստարայի ու Լենքորանի շրջաններում ավելի լայնորեն արմատացնելով, ցիտրուսայինների սեփական տնկերի ստեղծումով, լիմոնների մշակույթը կիսատականներում զարգացնելով, ձիթենու, պիստակի, նուշի և թուզի մշակույթի զարգացումով և վայրի աճող ու չորությունում աճող մերձարևադարձային բույսերի կուլտուրական վիճակի բերելով:

Պարտավորեցնել վերոհիշյալ շրջանների Ադրկոմկուսի (բ) շրջկոմներին և շրջգործկոմներին անհապաղ միջոցներ ձեռք առնել, վորոնք ապահովեն մերձարևադարձային բույսերի յուրացումը և վարելու,

մշակելու և այլ գարնանային աշխատանքների աջող կատարումը։

24. Պարտավորեցնել Հողժողկոմատին և ծխախոտաբուծական շրջանների շրջանային կուսակցական ու խորհրդային կազմակերպություններին ապահովել ծխախոտի ցանքը բարձր ագրոտեխնիկայի մակարդակով, մինչև փետրվարի 20-ն ավարտել ամբողջ հողի վարը, ստուգել հերկի վորակը և մինչև մարտի 1-ը կրկնահերկ անել բոլոր խոտանած տեղամասերում։ Ժամանակին հողի մեջ մտցնել հանքային պարարտանյութերը՝ խառնուրդի կանոնները խստապես պահպանելով։ Մինչև փետրվարի 20-ը պատրաստել ջերմանոցներն ապակեպատ շրջանակներով և ծածկոցներ պատրաստել տնկերը ծածկելու համար այն ձևով, վոր ապահովվի տնկերի ժամանակին ցանքը։ Կոլտնտեսություններում մթերել բոլոր անհրաժեշտ շինանյութերը ծխախոտի նոր սրահներ շինելու և հները նորոգելու համար։

25. Պարտավորեցնել Հողժողկոմատին և շրջանային կուսակցական և խորհրդային մարմիններին՝ անհրաժեշտ խնամք կազմակերպել այգիների ու խաղողի այգիների նկատմամբ և նախապատրաստել պտղաբանջարային մշակույթների ցանքսը ժամանակին կատարելու բոլոր աշխատանքները։ Այգիներում կատարել չորքամիջերի կրկնակի փորում, պտղատու և խաղողի տնկիների մաքրում և էտում, և ապահովել ամբողջ ապարատուրայի նախապատրաստումն այգիների ու խաղողի այգիների ժամանակին բուժման համար։ Լայնորեն արմատացնել պտղատու ծառերի և խաղողի վազերի տնկումը կոլտնտեսականների տնամերձ հողամասերում։ Ստուգել կարտոֆիլի սերմացուների պահպանման դրությունը կոլտնտեսություններում։ Ամբողջ վատորակ կարտոֆիլն անհապաղ փոխարինել նոր սերմանյութով։

26. Պարտավորեցնել շրջանային կուսակցական ու



խորհրդային կազմակերպություններին հենց այժմյանից սկսել դաշտային բրիգադային օղակների կազմակերպումը՝ նրանց սարքավորումը վերջացնելով մինչև ապրիլի 1-ը և աշխատել, վոր յուրաքանչյուր օղակ բրիգադի ու օղակի իսկական արտադրական օջախը հանդիսանա։ Օղակի կուլտ-լուս. աշխատանքի համար ընտրել և պատրաստել կոլտնտեսային ակտիվից լավագույն աշխատողներ։

27. Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բաքկոմի պլենումն առանձնապես նշում է կոլտնտեսությունների կողմից գյուղատնտեսական արտելի կանոնադրության քննարկման ու ընդունման և շրջգործկոմների կողմից գրանցման անթույլատրելի կերպով հետ մնալը։ Առ 20-ը հունվարի շրջգործկոմների կողմից գրանցվել են միայն 2726 կոլտնտեսություններ, վորոնք քննարկել և ընդունել են կանոնադրությունը, վոր կազմում է հանրապետության բոլոր կոլտնտեսությունների 77 տոկոսը։

Պլենումը պարտավորեցնում է բոլոր հետ մնացող շրջանների շրջկոմների քարտուղարներին և շրջգործկոմների նախագահներին՝ այդ կարևորագույն աշխատանքն իրենց ձեռքն առնել և ապահովել շրջանի բոլոր կոլտնտեսություններում գյուղատնտեսական արտելի ընդունման և գրանցման ամենաարագ վերջացումը։

28. Նշելով, վոր մինչև օրս դեռ մի շարք կոլտնտեսություններում շարունակում են տեղի ունենալ օրինակելի կանոնադրության խախտման փաստեր, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բաքկոմի միացյալ պլենումը պարտավորեցնում է շրջկոմների քարտուղարներին և շրջգործկոմների նախագահներին, նրանց անձնական պատասխանատվությամբ վճռական պայքար կազմակերպել կանոնադրության ամենափոքրիկ աղավաղման դեմ՝ պատժի ամենախիստ միջոցներ կիրառելով խախտողների նկատմամբ։

Հողժողկոմատը և շրջանային կուսակցական, խորհրդային կազմակերպությունները պետք է ապահովեն հողից մշտապես օգտվելու պետական ակտերը կոլտնտեսություններին հանձնելու աշխատանքի ավարտումն Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի սահմանած ժամկետներին առաջին հերթի շրջանների խմբի նկատմամբ։ Միամսյա ժամկետում միջոցառումներ նշել մնացած շրջանների հողերը մշտապես կոլտնտեսություններին ամրացնելու համար։ Մինչև ապրիլի 15-ն ավարտել կոլտնտեսականներին տնամերձ հողամասեր հատկացնելը։

29. Առաջին նշանակություն տալով կոլտնտեսային եկամուտների բաշխման հարցերի առթիվ կոլտնտեսությունների վարչությունների անցկացվող հաշվետու կամպանիային և 1936 թվի արտադրական պլանները կազմելուն, պլենումը պարտավորեցնում է շրջանային կուսակցական և խորհրդային կազմակերպություններին՝ գլխավորել այդ կարևորագույն աշխատանքները, մոբիլիզացիայի ենթարկելով կոլտընտեսային մասսաներին աշխատանքի ստախանովյան մեթոդների համար, որը բարձր բերքատվության և կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների եկամտայնության հետագա բարձրացման համար մղվող պայքարի հիմնական պայմանն է հանդիսանում։

30. Նշելով մի շարք դեպքեր, երբ ՄՏԿ-ները չեն կատարում կոլտնտեսությունների հետ կնքած պայմանագրերը՝ պլենումը պահանջում է Հողժողկոմատից, Ադրկոմկուսի (բ) շրջկոմներից, շրջգործկոմներից և ՄՏԿ դիրեկտորներից — ամենախիստ վերահսկողություն սահմանել պայմանագրերի կատարման նկատմամբ, որպես երկուստեք պարտավորություններ, որոնք ուղղված են դեպի կոլտնտեսային արտադրության վերելքը։

ՄՏԿ արտադրական խորհուրդներում և կոլտնտե կոլտնտեսություններում անցկացնել ՄՏԿ դիրեկտորների պարբերական հաշվետվություններ պայմանագրերի կատարման մասին։ Խիստ պատասխանատվության ենթարկել պայմանագրերի խախտման մեջ մեղավորներին։



31. Կենտրոնական և շրջանային մամուլն իր աշխատանքը պետք է կազմակերպի այնպես, որպեսզի իսկական օգնություն ցույց տա կոլտնտեսային և խորհտնտեսային դաշտերի ստախանովականներին. ճիշտ և հմտորեն տալ նրանց աշխատանքի փորձն այնպես, որպեսզի յուրաքանչյուր ստախանովականի աշխատանքի փորձն անհապաղ հասցվի կոլտնտեսականների լայն մասսաներին, ՄՏԿ և խորհտնտեսությունների բանվորներին ու մասնագետներին։

32. Շեչտելով մասսայական կուլտուր — լուսավորական աշխատանքի լայն ծավալման և որակական դրության բարձրացման խնդրի ահագին նշանակությունը գյուղում, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բաքկոմի պլենումը պարտավորեցնում է Լուսժողկոմատին, շրջանային կուսակցական և խորհրդային կազմակերպություններին՝ վճռականապես ուժեղացնել անգրագիտության և կիսագրագիտության վերացման դպրոցների և մեծահասակների մասսայական կրթության դասընթացների ամենօրյա ղեկավարությունը, նույնպես և ակումբների, գրադարանների, ընթերցարանների և խրճիթ-լաբորատորիաների ղեկավարությունը։

Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна

Հայերենը խմբագրեց՝ Ս. ՇԱԽՈՒՆԻ
Տեխ. խմբագիր՝ Կ. ԹԱՌԼԱՆՑԱՆ

Главлит № 930 Азпартиздат № 27. Заказ № 393 Гираж 5000
Типография „III Интернационал" ул. Ефима Саратовца

ՀՀ Ազգային գրադարան
NL0179736

12 ԿՈՊ.

248

# РЕЗОЛЮЦИИ

## ОБ'ЕДИНЕННОГО ПЛЕНУМА ЦК и БК АКП(б)

[29—31 января 1936.

Азпартиздат—Баку—1936.